

ՀՀ Կոտայքի մարզը գտնվում է հանրապետության կենտրոնում: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ ՀՀ Արագածոտնի, հյուսիսից՝ ՀՀ Լոռու, հյուսիս-արևելքից՝ ՀՀ Տավուշի, արևելքից՝ ՀՀ Գեղարքունիքի և հարավից՝ ՀՀ Արարատի մարզերին:

ՀՀ Կոտայքի մարզի տարածքով են հոսում Հրազդան և Ազատ գետերը: Հրազդան գետը (նախկին անվանումը՝ Զանգու) Արաքս գետի ձախ վտակներից է (երկարությունը՝ 141 կմ): Գետի համակարգում կա 340 վտակ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն: Գետի խոշոր վտակներից են Մարմարիկը, Ծաղկաձորը, Արայի գետը, Գետառը:

Ազատ գետը նույնպես Արաքսի ձախ վտակներից է (երկարությունը՝ 55 կմ): Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայից (հիմնականում սնվում է ստորերկրյա ջրերով): Գետի ջրերն օգտագործվում են հիմնականում ոռոգման նպատակով:

Մարզը հարուստ է հանքային ջրերով, դրա վկայությունն են «Բջնի» և «Արգնի» հանքային ջրերը:

Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների փեշերը, Ծաղկունյաց լեռնաշղթան, Հատիս և Արայի լեռները: Հատիս լեռը (նախկին անվանումը՝ Շամիրամի) կոնաձև հրաբխային զանգված է (բարձրությունը՝ 2 528 մ): Լեռը ծածկված է մարգագետնատափաստանային բուսականությամբ:

Արայի լեռը (բարձրությունը՝ 2 577 մ)՝ հանգած հրաբխային զանգված է, գտնվում է Արագած լեռից արևելք՝ Քասախ և Հրազդան գետերի միջև:

Մարզի հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1 200 – 1 300 մ բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1 700 – 1 800 մ բարձրության վրա):

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան–Հրազդան–Սևան ավտոմայրուղին և Երևան–Հրազդան–Իջևան երկաթգիծը:

2019թ.-ին մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 10.5 %,
- գյուղատնտեսություն՝ 8.3%,
- շինարարություն՝ 5.9%,
- մանրածախ առևտուր՝ 4.6%,
- ծառայություններ՝ 6.1%:

ՀՀ Կոտայքի մարզը համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն արդյունաբերությունն է: Մարզը մեծ դեր ունի էներգետիկայի ոլորտում: Այստեղ են գտնվում էլեկտրաէներգիայի արտադրության 2 խոշոր կազմակերպություն:

Մարզի արդյունաբերության մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ ոլորտները.

ա) սննդամթերքի և խմիչքների արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, ըմպելիքի արտադրություն),

բ) ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ապակու և դրանից պատրաստվող իրերի արտադրություն, ցեմենտի արտադրություն),

գ) մետաղագործական արդյունաբերություն և մետաղյա արտադրատեսակների արտադրություն (պողպատի և թուջի ձուլում),

դ) կահույքի արտադրություն, ոսկերչական արտադրատեսակների արտադրություն

Մարզի գյուղատնտեսությունը մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Հրազդան քաղաքի (2020թ. տարեսկզբին՝ 40.0 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 50 կմ է: Գտնվում է Հրազդան գետի վերին հոսանքի ձախ ափին: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Այստեղ է գտնվում Հրազդանի ՋԷԿ-ը, որը հզորագույնն է Հայաստանի Հանրապետությունում: Արդյունաբերության մյուս ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (մասնավորապես՝ ցեմենտի արտադրություն):

Արովյան քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 44.9 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 18 կմ հեռավորության վրա: Հանրապետության ամենաարագ աճող քաղաքներից է, արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկը:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում գարեջրի արտադրությունը:

Բյուրեղավան քաղաքի (2020թ. տարեսկզբին՝ 9.1 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 24 կմ հեռավորության վրա) արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ապակե տարայի, ճենապակուց և հախճապակուց տնտեսական կենցաղային արտադրատեսակների արտադրություններ):

Եղվարդ քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 11.9 հազ. բնակիչ) գտնվում է Արայի լեռան հարավային ստորոտում, հեռավորությունը Երևանից 18 կմ է:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում է սննդամթերքի և խմիչքների արտադրությունը (թորած ալկոհոլային խմիչքների (կոնյակի), կաթնամթերքի), կաշվե արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրությունը:

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի մեջ հիմնական ուղղությունը հացահատիկի մշակությունն է:


Նոր Հաճն քաղաքի (2020թ. տարեսկզբին՝ 9.3 հազ. բնակիչ, հեռավորությունը Երևանից 30 կմ է) արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի կահույքի և ոսկերչական արտադրանքների արտադրությունը:

Չարենցավան քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 20.4 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 36 կմ հեռավորության վրա, Հրազդան գետի ձախ ափին: 1953թ. ՀԷԿ-ի շինարարության ավարտից հետո քաղաքում կառուցվեցին մի շարք խոշոր արդյունաբերական կազմակերպություններ և Չարենցավանը դարձավ հանրապետության կարևոր արդյունաբերական կենտրոն:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի մետաղագործական արդյունաբերությունը և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը (պողպատի և թուջի ձուլում):

Օաղկաձոր քաղաքի (2020թ. տարեակգրին՝ 1.2 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 55 կմ հեռավորության վրա) կլիման մեղմ է և առողջարար: Առողջարանային քաղաք է:

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄՇԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԲՈՒՐԳԸ,
2020թ. հունվարի 1-ի դրությամբ**



ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

| | Քանակը | | | | |
|-------------------------------------|--------|-------|-------|-------|-------|
| | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 |
| Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը | 1 148 | 1 147 | 1 162 | 1 144 | 1 317 |
| <i>այդ թվում՝</i> | | | | | |
| խանութներ | 909 | 901 | 955 | 943 | 1 128 |
| կրպակներ | 153 | 163 | 128 | 119 | 107 |
| գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ | 2 | 2 | 2 | 2 | 1 |
| սպառողական ապրանքների շուկաներ | 5 | 3 | 3 | 3 | 3 |
| առևտրի այլ օբյեկտներ | 79 | 78 | 74 | 77 | 78 |

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | Քանակը | | | | |
|---|--------|------|------|------|------|
| | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 |
| Պետական նախադպրոցական | 53 | 52 | 53 | 53 | 54 |
| Պետական հանրակրթական | 104 | 104 | 103 | 101 | 101 |
| Ոչ պետական հանրակրթական | 1 | 1 | - | - | - |
| Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մասնկապատանեկան ստեղծագործական կենտրոններ | 24 | 23 | 23 | 25 | 25 |

| | Քանակը | | | | |
|--|--------|------|------|------|------|
| | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 |
| Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹ | 8 | 8 | 7 | 6 | 7 |
| Պետական միջին մասնագիտական ուսումնական | 6 | 6 | 6 | 6 | 6 |
| Ոչ պետական բարձրագույն ուսումնական | 1 | 1 | 1 | 1 | 1 |

ՔԱՂԱՔՆԵՐ

| Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ² |
|-------------|--|
| Հրազդան | 40 011 |
| Աբովյան | 44 931 |
| Չարենցավան | 20 437 |
| Եղվարդ | 11 952 |
| Բյուրեղավան | 9 069 |
| Նոր Հաճն | 9 262 |
| Ծաղկաձոր | 1 174 |

ԳՅՈՒՂԵՐ

| | Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ³ |
|-----------------------------|------------------|--|
| Հրազդանի տարածաշրջան | | |
| 1 | Ալափարս | 1 970 |
| 2 | Աղավնաձոր | 1 229 |
| 3 | Արզակյան | 2 688 |
| 4 | Արտավազ | 524 |
| 5 | Փյունիկ | 324 |
| 6 | Բջնի | 2 705 |
| 7 | Լեռնանիստ | 2 910 |
| 8 | Կարենիս | 726 |
| 9 | Հանքավան | 61 |
| 10 | Մարմարիկ | 710 |
| 11 | Մեղրաձոր | 2 585 |
| 12 | Գոռգոչ (Կորչլու) | 17 |
| 13 | Ջրառատ | 531 |
| 14 | Սոլակ | 2 448 |
| 15 | Քաղսի | 2 530 |
| 16 | Ֆանտան | 872 |
| Կոտայքի տարածաշրջան | | |

¹ Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

² Քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացված է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառմամբ:

³ ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 954 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի, ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են Արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման և Ոստիկանության (ճշգրտված՝ տ/տ կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով) վարչական ռեգիստրների տվյալների վրա: Ընդ որում, վերջինս վերագնահատված է ՏՏԿԱՀ արդյունքներով ստացված միգրացիայի տվյալներով (շեղումը՝ 01.01.2020թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +10.8%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղերի միջև տվյալ տեղեկատվության գրանցման, փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

| | Անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ³ |
|---------------------------|-------------|---|
| 1 | Ակունք | 2 163 |
| 2 | Առինջ | 6 189 |
| 3 | Արամուս | 3 860 |
| 4 | Արզնի | 2 640 |
| 5 | Բալախովիտ | 3 604 |
| 6 | Գառնի | 7 864 |
| 7 | Գեղադիր | 715 |
| 8 | Գեղաշեն | 4 231 |
| 9 | Գեղարդ | 307 |
| 10 | Գետարգել | 795 |
| 11 | Գողթ | 2 046 |
| 12 | Զառ | 1 366 |
| 13 | Զովաշեն | 168 |
| 14 | Զովք | 824 |
| 15 | Կաթնաղբյուր | 646 |
| 16 | Կամարիս | 2 276 |
| 17 | Կապուտան | 1 337 |
| 18 | Կոտայք | 1 794 |
| 19 | Հատիս | 320 |
| 20 | Հացավան | 571 |
| 21 | Զորաղբյուր | 2 356 |
| 22 | Մայակովսկի | 2 177 |
| 23 | Նոր գյուղ | 1 572 |
| 24 | Նուռնուս | 624 |
| 25 | Ողջաբերդ | 947 |
| 26 | Պտղնի | 1 668 |
| 27 | Ջրաբեր | 428 |
| 28 | Ջրվեժ | 6 130 |
| 29 | Սևաբերդ | 251 |
| 30 | Վերին Պտղնի | 808 |
| Նաիրիի տարածաշրջան | | |
| 1 | Արագյուղ | 1 108 |
| 2 | Արզել | 3 116 |
| 3 | Բուժական | 1 583 |
| 4 | Գետամեջ | 802 |
| 5 | Զովունի | 6 251 |
| 6 | Զորավան | 1 629 |
| 7 | Թեղենիք | 524 |
| 8 | Մրգաշեն | 2 139 |
| 9 | Նոր Արտամետ | 1 081 |
| 10 | Նոր Գեղի | 6 530 |
| 11 | Նոր Երզնկա | 1 813 |
| 12 | Պռոշյան | 5 527 |
| 13 | Սարայանջ | 312 |
| 14 | Քանաքեռավան | 3 822 |
| 15 | Քասախ | 5 782 |
| 16 | Քարաշամբ | 699 |

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2019թ.**

| | Ընդամենը | նրանցից՝ | |
|--|----------|---------------------|------------------------|
| | | կանաչը ¹ | տղամարդիկ ¹ |
| Բնակչությունը, մարդ | 10 000 | 5 224 | 4 776 |
| Ծնվածներ, մարդ | 122 | 59 | 63 |
| Մահացածներ, մարդ | 91 | 43 | 48 |
| Ամուսնություններ | 53 | X | X |
| Ամուսնալուծություններ | 13 | X | X |
| Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ | 38.3 | X | X |
| Կրթության ոլորտ, հաճախումը կրթության, մարդ՝ | | | |
| նախադպրոցական | 278 | 130 | 148 |
| հանրակրթական | 1 514 | 736 | 778 |
| երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ | 195 | 120 | 75 |
| նախնական մասնագիտական (արհեստագործական) | 25 | 4 | 21 |
| միջին մասնագիտական | 56 | 25 | 31 |
| բարձրագույն մասնագիտական | 9 | 4 | 5 |
| Առողջապահության ոլորտ՝ | | | |
| հաճախել են պոլիկլինիկատարվարն ընթացքում (հաճախումների քանակը) | 36 886 | ... | ... |
| Մարզիկներ, մարդ | 133 | 11 | 122 |
| Զբաղվածներ, մարդ | 4 623 | 1 869 | 2 754 |
| նրանցից՝ գիտական հիմնարկներում | 0.2 | 0.2 | - |
| նրանցից՝ գիտության դոկտոր | - | - | - |
| գիտության թեկնածուներ | 0.0 | 0.0 | - |
| ուսուցիչներ | 103 | 92 | 11 |
| բժիշկներ | 24 | ... | ... |
| միջինբուժանձնակազմ | 42 | ... | ... |
| Գործազուրկներ, մարդ | 1 165 | 557 | 608 |
| Սոցիալական ապահովության ոլորտ | | | |
| ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ | 1 499 | 874 | 625 |
| աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ | 314 | X | X |
| Հաճախումների քանակը տարվա ընթացքում | | | |
| գրադարան | 16 425 | ... | ... |
| թատրոն | - | - | - |
| համերգ | - | - | - |
| թանգարան | 683 | ... | ... |
| Իրավական ոլորտ | | | |
| հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում | 77 | X | X |
| այդ թվում՝ նյ մեծ ծանրության | 34 | X | X |
| միջին ծանրության | 25 | X | X |
| ծանր | 17 | X | X |
| առանձնապես ծանր | 1 | X | X |

¹Ցուցանիշները հաշվարկային են: